ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 168 որոշմամբ հաստատված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնում Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 163 որոշման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 3467-Ա հրամանի հիման վրա, ավելացվել են քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր և առաջատար մասնագետների երկուական պաշտոններ, որոնք համալրվել են նույն բաժնի աշխատակիցների կողմից և ներկա պահին առաջացել է քաղաքաշինության և հողաշինության բաժին 1-ին կարգի մասնագետի պաշտոնի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 3.2-3/, երեք միավոր 2-րդ կարգի մասնագետի պաշտոնների /պաշտոնի անձնագրի ծածկագեր 3.3-1, 3.3-2, 3.3-3/, ինչպես նաև իրավաբանական բաժնի 1-ին կարգի մասնագետի պաշտոնի /պաշտոնի անձնագրի ծածկագիր 3.2-19/ կրճատման անրաժեշտություն, քանի որ նշված պաշտոնները թափուր են և նրանց համալրելու անհրաժեշտություն չկա: